ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/6-1

ք. Երևան «31» 10 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՄՍԻ ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուսաննա Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Առողջապահական եվ աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3300000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ

ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում **են Առողջապահական եվ աշխատանքի տեսչական մարմնին**՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ԷՄՍԻ Ավտոհաուս» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Կառավարական տուն, 1	Էզրաս Հասրաթյան 9/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ	Հ/Հ 220302940659000
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 01337147
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 31 » 10 2025թ. կնքված
ԿԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/6-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը****	չափման միավորը	պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման***	
						հասցեն	Ժամկետը**
1	50111130/576	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ համաձայն կից 1.1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր – գնացուցակի Մեքենաների քանակը՝ 2 հատ	դրամ	1 200 000	1	ք. Երևան, Մատակարարի կողմից նշված հասցե	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացույցային օր
2	50111130/577	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ համաձայն կից 1.1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր – գնացուցակի Մեքենաների քանակը՝ 1 հատ	դրամ	100 000	1	ք. Երևան, Մատակարարի կողմից նշված հասցե	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացույցային օր
3	50111130/579	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ համաձայն կից 1.1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր – գնացուցակի Մեքենաների քանակը՝ 3 հատ	դրամ	1 500 000	1	ք. Երևան, Մատակարարի կողմից նշված հասցե	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացույցային օր
6	50111130/582	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ համաձայն կից 1.1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր – գնացուցակի Մեքենաների քանակը՝ 1 հատ	դրամ	500 000	1	ք. Երևան, Մատակարարի կողմից նշված հասցե	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 365 օրացույցային օր

** Տեխնիկական սպասարկման կայանը գտնվում է Երևան քաղաքի տարածքում:*
***Ծառայությունները կմատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման և առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման դեպքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:*
****Կատարողը Պատվիրատուի պահանջով կտրամադրիլ տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:*
***** Պարտադիր պայման՝ Օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի առկայությունը և չօգտագործված լինելը սպասարկման կետում պարտադիր է:*
******Տեխսպասարկման կայանը հագեցած է առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ, անվաբացքի ուղղման ստենդով, ինժեկտորների լվացման ստենդով, թափքի ուղղման ստենդ, չորացման դիտահոր: Ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գները ներկայացված են N 1.1 հավելվածում:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505554
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՄՍԻ Ավտոհաուս» ՍՊԸ
ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Էզրաս Հասրաթյան 9/3
«Ակբա Բանկ» ԲԲԸ
ՀՀ 220302940659000
ՀՎՀՀ 01337147
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«31» 10 2025թ. կնքված
ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/6-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/576	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	50111130/577	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3	50111130/579	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
6	50111130/582	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

***Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՄՍԻ Ավտոհաուս» ՍՊԸ
ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Էզրաս Հասրաթյան 9/3
«Ակբա Բանկ» ԲԲԸ
ՀՀ 220302940659000
ՀՎՀՀ 01337147

/ստորագրություն/
Կ.Տ

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ

„31. 10 Հավելված N 1
2025թ. կնքված
ՎԱ-ԱՍՏՄ-ԳՀԾՁԲ-26/6-1 ծածկագրով
պայմանագրի

ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գներ

Հ/Հ	Ընթացիկ,միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չ/Բ 1	Չ/Բ 2	Չ/Բ 3	Չ/Բ 6
		Տոյոտա Քեմրի 2010-2013	Տոյոտա Կորոլլա 2007	Տոյոտա Կորոլլա 2013	Նիսսան X TRAIL 2007
		2	3	4	7
1	Բռնկման համակարգի ստուգում	3,307	3,307	3,307	3,307
2	Կցորդման համակարգի ստուգում	3,307	3,307	3,307	3,307
3	Թաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	3,307	3,307	3,307	3,307
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3,307	3,307	3,307	3,307
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	3,307	3,307	3,307	3,307
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3,307	3,307	3,307	3,307
	1.Շարժիչ	0	0	0	0
7	Շարժիչի հանում և տեղադրում	31,850	31,850	31,850	31,850
8	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	39,690	39,690	39,690	39,690
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	44,002	31,850	31,850	36,750
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	19,600	16,660	16,660	19,600
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	12,250	12,250	12,250	12,250
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	20,090	17,395	17,150	16,415
13	Վառոցքի մոմի քնիկի նորոգում	637	637	637	637
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	637	637	637	637
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	637	637	637	637
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3,185	3,185	3,185	3,185
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	20,090	15,680	15,680	15,680
18	Ծնկաձև լիսեռի հղկում	9,898	9,898	9,898	9,898
19	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	980	980	980	980
20	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	28,910	28,910	28,910	28,910
21	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	9,065	9,065	9,065	9,065
22	Ծնկաձև լիսեռի ուղղում	5,880	5,880	5,880	5,880
23	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7,644	7,644	7,644	7,644
24	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	10,290	10,290	10,290	10,290
25	Շարժիչի բլոկի փոխարինում	29,400	29,400	29,400	29,400
26	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	20,580	20,580	20,580	20,580
27	Մխոցի փոխարինում 1 հատ	774	774	774	774
28	Թաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,372	1,372	1,372	1,372
29	Թաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	588	588	588	588
30	Թաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	588	588	588	588
31	Փականիվի փոխարինում	588	588	588	588
32	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	0	0	0	0
33	Շարժիչի շղթայի փոխարինում	12,985	10,388	10,388	10,388
34	Շարժիչի քարտերի նորոգում (նռակցում)	6,762	6,762	6,762	6,762
35	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	725	725	725	725
36	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	725	725	725	725
37	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7,252	7,252	7,252	7,252
38	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	3,675	3,675	3,675	3,675
39	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	661	661	661	661
40	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	906	906	906	906
41	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	774	774	774	774
42	Յուղի ծորակի փոխարինում	906	906	906	906
43	Օդաքաշակ փողրակի փոխարինում	774	774	774	774
44	Թ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,544	10,388	12,544	10,388
45	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	2,029	2,029	2,029	2,029
46	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,499	1,499	1,499	1,499
47	Թափանիվի առանցքակալի փոխարինում	774	774	774	774
48	Շարժիչի կափույրի փոխարինում	774	774	774	774
49	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	774	774	774	774
50	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	774	774	774	774
51	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	774	774	774	774
52	Շարժիչի թաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	774	774	774	774
53	Ատամնանիվի փոխարինում	0	0	0	0
54	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	0	0	0	0
55	Մուխարիկ փոխարինում 1կ/տ	774	774	774	774

56	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	4,155	3,724	3,724	3,724
57	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	2,670	2,670	2,670	2,670
58	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	774	774	774	774
59	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	3,822	3,822	3,822	3,822
60	Շարժիչի յուղի արանքաչափիչի (щуп) իրանի փոխարինում	774	774	774	774
61	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	3,724	3,724	3,724	3,724
62	Շարժիչի գամասեղի փոխարինում	1,886	1,886	1,886	1,886
63	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	1,989	1,989	1,989	1,989
64	Գլխիկի հեղույսի փոխարինում	1,989	1,989	1,989	1,989
65	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1,989	1,989	1,989	1,989
66	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	1,989	1,989	1,989	1,989
67	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	1,989	1,989	1,989	1,989
68	Շարժիչի քիմիական լվացում ընդհանուր	3,822	3,822	3,822	3,822
69	Թաշխիչ լիսեռի նորոգում /վոանի տեղադրում/	774	774	774	774
70	Ծնկաձև լիսեռի կարգավորող տափոդակի տեղի նորոգում	774	774	774	774
71	Կափյուրների հոկում 1 հատը	774	774	774	774
72	Կափյուրի բնիկի նորոգում /գնեզդո/	774	774	774	774
73	Պարազիտ լիսեռի հոկում և վոանի տեղադրում	774	774	774	774
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	0	0	0	0
74	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	774	774	774	774
75	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	774	774	774	774
76	Համակարգչային ախտորոշում	3,381	3,381	3,381	3,381
77	Յուղի ռադիատորի փոխարինում	3,097	2,568	2,568	2,568
78	Յուղի ռադիատորի նորոգում	774	774	774	774
79	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	774	774	774	774
80	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	4,155	3,626	3,626	3,626
81	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	6,762	3,626	3,626	3,626
82	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	1,499	1,499	1,499	1,499
83	Օդի զտիչի փոխարինում	774	774	774	774
84	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,244	2,244	2,244	2,244
85	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	774	774	774	774
86	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	774	774	774	774
87	Ինժեկտորի քոցամուղների փոխարինում	1,695	1,695	1,695	1,695
88	Ինժեկտորի քոցամուղների մաքրում	12,985	10,388	10,388	10,388
89	Ինժեկտորի քոցամուղի խտաքուկերի փոխարինում	774	774	774	774
90	Բենզամղիչի փոխարինում	5,233	5,233	5,233	5,233
91	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	3,822	3,822	3,822	3,822
92	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,822	3,822	3,822	3,822
93	Բռնկման կարգավորում	3,822	3,822	3,822	3,822
94	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,822	3,822	3,822	3,822
95	Ղեկավարման բլոկի վերանորոգում	7,742	7,742	7,742	7,742
96	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	3,822	3,822	3,822	3,822
97	Վառելիքի բաքի մաքրում	637	637	637	637
98	Օդի ծախսի տվիչի փոխարինում	2,568	2,568	2,568	2,568
99	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	2,568	2,568	2,568	2,568
100	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2,568	2,568	2,568	2,568
101	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	774	774	774	774
102	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	774	774	774	774
103	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	2,568	2,568	2,568	2,568
104	Տվիչի փոխարինում	2,568	2,568	2,568	2,568
105	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	2,568	2,568	2,568	2,568
106	Օդազտիչի իրանի փոխարինում	774	774	774	774
107	Էլ.բենզոմղիչի կախոցի փոխարինում	774	774	774	774
	3. Սառեցման և արտածման համակարգ	0	0	0	0
108	Հովհարի փոխարինում	3,822	3,822	3,822	3,822
109	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	637	637	637	637
110	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,544	8,918	8,918	9,408
111	Ռադիատորի նորոգում	28,420	28,420	28,420	28,420
112	Շերտափեղկի փոխարինում	1,127	1,127	1,127	1,127
113	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	1,127	1,127	1,127	1,127
114	Ընդարձակող բաքի փոխարինում	774	774	774	774
115	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1,499	1,499	1,499	1,499
116	Ջրի ծորակի փոխարինում	1,127	1,127	1,127	1,127
117	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2,376	2,376	2,376	2,376
118	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	774	774	774	774

119	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	10,388	10,388	10,388	10,388
120	Վառարանի ռադիատորի նորոգում	5,321	7,252	7,252	7,252
121	Վառարանի շարժիչի փոխարինում	2,033	2,033	2,033	2,033
122	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	2,033	2,033	2,033	2,033
123	Ջեռուցիչի իրանի փոխարինում	2,033	2,033	2,033	2,033
124	Թերմոստատի փոխարինում	7,252	7,252	7,252	7,252
125	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	12,544	10,388	10,388	10,388
126	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	2,372	2,372	2,372	2,372
127	Գեներատորի փոկի փոխարինում	3,097	3,097	3,097	3,097
128	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	3,097	3,097	3,097	3,097
129	Ջրի ռադիատորի վերանորոգում	29,645	29,645	29,645	29,645
130	Թերմոստատի միջադիրի փոխարինում	2,372	2,372	2,372	2,372
131	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	774	774	774	774
132	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	774	774	774	774
133	Խլարարի անուրի (хамут) փոխարինում	774	774	774	774
134	Խլարարի նեղդիրի փոխարինում	2,038	2,038	2,038	2,038
135	Խլարարի կախոցի փոխարինում	774	774	774	774
136	Հովացման հեղուկի փոխարինում	2,768	2,180	2,180	2,180
137	Դիֆուզորի փոխարինում	2,180	2,180	2,180	2,180
138	Կոնդիցիոների լիցքավորում	3,332	3,332	3,332	3,332
139	Կոնդիցիոների յուղի ավելացում	774	774	774	774
140	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	3,332	3,332	3,332	3,332
141	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1,744	1,744	1,744	1,744
142	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	3,097	3,097	3,097	3,097
143	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	5,214	5,214	5,214	5,214
144	Կոնդիցիոների կալումակի հանում և տեղադրում	2,572	2,572	2,572	2,572
	4. Կցորդում և ՓՏ	0	0	0	0
145	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5390	5390	5390	5390
146	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	6860	6860	6860	6860
147	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	15190	15190	15190	10290
148	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3920	3920	3920	3920
149	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3920	3920	3920	3920
150	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2450	2450	2450	2450
151	Կցորդման երկժանիի փոխարինում	3430	3430	3430	3430
152	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	95,060	82320	82320	95060
153	ՓՏ-ի կամ ԱՓՏ-ի հանում և տեղադրում	42630	42630	42630	42630
154	ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում	35,035	35,035	35,035	35,035
155	ՓՏ-ի պատյանի փոխարինում	774	774	774	774
156	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	774	774	774	774
157	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	0	0	0	774
158	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	774	774	774	774
159	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	0	0	0	774
160	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	0	0	0	774
161	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	0	0	0	774
162	ՓՏ-ի քարձիկի փոխարինում	5,704	5,704	5,704	5,704
163	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	0	0	0	774
164	ՓՏ-ի յուղի փոխարինում	5,704	5,704	5,704	5,704
165	Վազքաչափի շարժաքերի փոխարինում	774	774	774	774
166	Փոխարկման մեխանիզմի կապլոնների փոխարինում	774	774	774	774
167	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	59,682	59,682	59,682	59,682
168	ԱՓՏ-ի հավաքածույի փոխարինում	774	774	774	774
169	ԱՓՏ-ի փոխարինում	3,332	3,332	3,332	3,332
170	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	774	774	774	774
171	ԱՓՏ-ի կոմվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,762	6,762	6,762	6,762
172	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	6,762	6,762	6,762	6,762
173	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալումակի փոխարինում	637	637	637	637
174	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	529	529	529	529
175	ԱՓՏ-ի համակարգչի և սոլենոիդների փոխարինում	529	529	529	529
176	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	2,646	2,646	2,646	2,646
177	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաքուկերի փոխարինում	2,646	2,646	2,646	2,646
178	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	529	529	529	529
179	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	529	529	529	529
180	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	529	529	529	529
181	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում հանած ԱՓՏ-ի դեպքում	2,646	2,646	2,646	2,646
182	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	529	529	529	529
183	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	5,292	5,292	5,292	5,292
184	ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով	774	774	774	774

	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	0	0	0	0
185	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	33320	33320	33320	33320
186	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	20090	20090	20090	20090
187	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում	7840	7840	7840	7840
188	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	3675	3675	3675	3675
189	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	3332	3332	3332	3332
190	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	7105	7105	7105	7105
191	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	9310	9310	9310	9310
192	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	5390	5390	5390	5390
193	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	4165	4165	4165	4165
194	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	980	980	980	980
195	Բաշխիչ տուփի քարձիկի փոխարինում	3675	3675	3675	3675
196	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	3675	3675	3675	3675
197	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	1470	1470	1470	1470
198	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3675	3675	3675	3675
199	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	5390	5390	5390	5390
200	Բաշխիչ տուփի կալումակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5390	5390	5390	5390
201	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	3920	3920	3920	3920
202	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	7350	7350	7350	7350
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0	0	0	0
203	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	15190
204	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	0	0	0	9555
205	Առջևի կամրջակի կիսաառնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	7350
206	Առջևի կամրջակի կիսաառնու առանցքակալի փոխարինում	0	0	0	9310
207	Առջևի կամրջակի կիսաառնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	0	0	4165
208	Կամրջակի յուղի փոխարինում	3,332	3,332	3,332	3,332
209	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,410	4,410	4,410	4,410
